

**ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԱՎՈՐԱՍԻԱԿԱՆ
ԵՎ ԱՐԵՎԵԼԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ
ՎԵՐՋԵՐԻՆ-20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ**

Մաս երկրորդ: ՀՅԴ եվրոպական քարոզչությունը և
«Pro Arménia»-ի ծնունդը *

Բանալի բառեր – ՀՅ Դաշնակցություն, եվրոպական քարոզչություն, ուսանողական շրջանակներ, Քր. Մի-բայելյան, Յու. Ղամբարյան, Սոցիալիստական ինտեր-նացիոնալ, «Pro Arménia»:

Մուտք

1895 թ. մայիսի 11-ին մեծ տերությունների ընդունած բարենորոգումների ծրագրի արթնացրած հույսերի ու դրանց հաջորդած 1895-1896 թթ. դաժան կոտորածների առաջ բերած հուսալքության մթնոլորտում ՀՅ Դաշնակցության Կովկասի, Ռուսաստանի ու Պարսկաստանի մարմինների 1896 և 1897 թթ., այսպես կոչված, տարեկան ընդհանուր ժողովներում¹ աստիճանաբար ուրվագծվեց, իսկ փոքր-ինչ ուշ՝ 1898 թ. գարնանը տեղի ունեցած երկրորդ ընդհանուր ժողովում վերջնականապես ձևակերպվեց ՀՅԴ եվրոպական քարոզչության քաղաքական ծրագիրը: Դրա իրականացման գործիքակազմի ընտրության խնդիրը սկզբում դիտարկվում էր «Դրոշակի» խմբագրությունն ընդարձակելու և այն «Դաշնակցութեան արտասահմանեան

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.12.2022:

1 Հետագայում դրանց տրվեց **ռայոնական ժողովների** կարգավիճակ:

ներկայացուցիչ-բիրո»-ն² դարձնելու սահմանափակ առաջադրանքի տիրույթում: Բայց շուտով պարզ դարձավ, որ Եվրոպայի քաղաքական բեմահարթակ մուտք գործելու համար չպետք է պարփակվել 1893 թվականից ժնևում հաստատված «Դրոշակի» խմբագրության հարաբերական աշխատանքների շրջագծում: Շվեյցարիան՝ որպես Արևելյան Եվրոպայի ու Առաջավոր Ասիայի բռնապետական վարչակարգերի հետապնդումներից խուսափող հեղափոխական գործիչների հավաքատեղի, կապերի ու հարաբերությունների միասեռ դաշտ էր ՀՅԴ-ի համար: Այնտեղ գրեթե չկային ՀՅԴ «եվրոպական պրոպագանդի» հիմնական թիրախների՝ 1895 թ. «Մայիսյան բարենորոգումների» ծրագրի իրականացման համար պատասխանատու եվրոպական տերությունների ու օսմանյան բռնապետության դեմ պայքարող ուժերի հետ անմիջականորեն շփվելու հնարավորություններ: Առաջին առաջադրանքը պահանջում էր զգալիորեն ընդլայնել կուսակցության կապերն ու հարաբերությունները Եվրոպայի հիմնական մայրաքաղաքներում, իսկ երկրորդը՝ մնայուն քաղաքական ներկայություն ապահովել բալկանյան երկրներում, առաջին հերթին՝ Բուլղարիայում: Ուստի 1898 թ. ապրիլի 5-ին սկսված և շուրջ երեք ամիս տևած ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովը որոշեց ընդլայնել արտասահմանում Հայկական հարցի օգտին տարվող քարոզչությունը՝ դրանում ներգրավելով եվրոպական երկրներում ուսանող հայ երիտասարդության լավագույն ուժերին: Այդ նպատակին էին ծառայելու նաև երկու բյուրոների համակարգի ձևավորումը և Քրիստափոր Միքայելյանի ու Ռոստոմի նման կարող ուժերի ընդգրկումը նորաստեղծ Արևմտյան բյուրոյի կազմում՝ արևմտաեվրոպական քաղաքական շրջանակների ու բալկանյան ժողովուրդների հետ աշխատելու համար: Նման նպատակադրումը բխում էր կուսակցության նոր մարտավարության քննարկումից առաջ ժողովականների կողմից կոնսենսուսով հաստատված հետևյալ համոզմունքից. «...առանց եվրոպական միջամտության անկարող ենք մեր ժողովուրդի ազատության գործը գլուխ բերել, հետևաբար, գործունեության եղանակը որոշելու ատեն ի նկատի պիտի ունենալ այդ միջամտությունը յառաջ բերելու բոլոր հնարավորությունները»³:

2 «Նիթեր Հ.Յ. Դաշնակցության պատմության համար», խմբ. Հ. Տառնապետանի, հատ. Բ., Պէրյուք, 1985, էջ 32:

3 Նույն տեղում, էջ 56:

Սրանից հետևում է, որ «ապագա ազատ Հայաստանի» որոշակի տարածքներում ուժերի կենտրոնացման վերաբերյալ բոլոր որոշումները, որոնք ընդունել էր ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովը, Օսմանյան կայսրության բռնապետական վարչակարգի պայմաններում իրականանալի էին թվում վերջինիս կողմից գործադրվող քաղաքական բռնությունն արտաքին միջամտությամբ սանձելու պարագայում: Դրանով Հայկական հարցի լուծման ուղիները շաղկապվում էին Օսմանյան կայսրության հանդեպ վաղուց արդեն գործադրվող հումանիտար ինտերվենցիայի ընձեռած հնարավորությունների հետ:

1. Հայ երիտասարդության քաղաքական ներուժի համախմբումը

19-րդ դարի վերջին քառորդին եվրոպական երկրների հետ հայերի մշակութային ու գիտական շփումների աշխուժացման հետևանքով զգալիորեն փոխվել էր Եվրոպա մայրցամաքում նրանց բնակեցման աշխարհագրությունը: Եթե նախկինում եվրոպական երկրներ այցելողների շրջանում գերիշխում էին հայ վաճառականները, ապա Լուսավորության դարի վերջին քառորդում հայ երիտասարդության պատկառելի զանգված էր ուսանում Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Գերմանիայի և այլ երկրների առաջատար ուսումնական հաստատություններում: Համաձայն 1902 թ. Խաչատուր Մալումյանի (Է. Ակնունի) ջանքերով հիմնված Եվրոպայի հայ ուսանողական միության տեղեկագրի՝ նրանց թիվը դարավերջին արդեն մի քանի հարյուրի էր հասնում, իսկ տեղաբաշխման աշխարհագրությունը առաջին հերթին ներառում էր Փարիզն ու Նանսին (Ֆրանսիա), Ժնևն ու Բազելը (Շվեյցարիա), Բեռլինն ու Լայպցիգը (Գերմանիա): Այս հիմնական կենտրոններում ուսանող հայ երիտասարդները, ՀՅԴ հիմնադիր ժողովներից սկսած, որոշակի կապերի ու հարաբերությունների մեջ էին նորաստեղծ կուսակցության հետ: Այսպես՝ այդ ժողովների շրջանում «Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան» առաջին կենտրոնական վարչության անդամ ընտրված Հովհ. Լոռու-Մելիքյանն ուսանում էր միկրոբիոլոգիայի հիմնադիր Լուի Պաստորի՝ 1887 թ. Փարիզում հիմնած հոչակավոր ինստիտուտում, որն այդ

բնագավառում առաջատար էր ոչ միայն Ֆրանսիայում, այլև ողջ Եվրոպայում:

Ֆրանսիական մեկ այլ քաղաքում՝ Նանսիում, 1990-ականներին սովորում էին 26 հայ ուսանողներ, որոնցից 4-ը համիդյան ջարդերի շրջանում կարնեցի Գարեգին Փաստրմաձյանի ու տրապիզոնցի Հայկ Թիրաքյանի գլխավորությամբ կիսատ թողեցին իրենց ուսումն ու վերադարձան հայրենիք՝ 1896 թ. դառնալով Բանկ Օտտոմանի գործողության ակտիվ մասնակիցները:

Մյուս կողմից՝ 1893 թվականից Ռոստոմի ջանքերով Շվեյցարիայում հաստատված «Դրոշակի» խմբագրությունն աստիճանաբար իր շուրջն էր համախմբել ժնևի և Բազելի հայ ուսանողներին ու ուսանողուհիներին, որոնց թվում էին նաև նրա ապագա կինը՝ շուշեցի Եղիսաբեթ Մելիք-Շահնազարյանը, և 1897 թ. իր քեռու՝ Միքայել Արամյանցի նյութական աջակցությամբ ժնևի համալսարանն ավարտած Միքայել Հովհաննիսյանը (հետագայում՝ Վարանդյան): Սակայն դարավերջին Եվրոպայում ուսանող հայերի թիվն ավելի արագ տեմպերով էր աճում Գերմանիայում, որտեղ Լայպցիգում սովորող երիտասարդների ջանքերով դեռևս 1880-ականներին հիմնվել էր «Հայ-ձեմարանական Ընկերությունը կամ Ուսանողական Միությունը»⁴:

Այս ուսանողական շրջանակներին 1896 թվականից գումարվել էին նաև Ֆրանսիայի հարավային դարպասի դեր կատարող Մարսելում հաստատված Բանկ Օտտոմանի գործողության մասնակից դաշնակցական և Զեյթունի ապստամբության մասնակից հնչակյան հերոսները, ինչպես նաև կոտորածներից մազապուրծ մեծ թվով պոլսեցի երիտասարդներ:

ՀՅ Դաշնակցության երկրորդ ընդհանուր ժողովի որոշումների «Կազմակերպություն» բաժնում ամրագրվել էր այն դրույթը, որ Շվեյցարիայում «Դրոշակի» հրատարակությանը զուգահեռ՝ հենց այդ նույն ժողովում ձևավորված ու բավականին ուժեղ կազմ⁵ ունեցող «Արևմտեան Բիւրօն պարտաւոր է հրատարակել ամէն անգամ, երբ պէտք զգացուի, ֆրանսերէն լեզուով «Դրօշակ»-ի յաւելուած մը՝ Supplement Francais Du Droschak, որ պիտի ծառայէ եւրոպական հա-

4 Աբեղեան Ա., Մեր կուսակցական կեանքը Գերմանիոյ մէջ, «ՀՅ Դաշնակցութիւնը Եւրոպայի մէջ (60-ամեակին առթիւ)», Փարիզ, 1952, էջ 54:

5 Էլլեն (Քրիստափոր Միքայելյան), Ռոստոմ (Ստեփան Զորյան), Վահապ (Արշակ Վռամյան), Գարո (Գարեգին Փաստրմաձյան), Բորիս (Սմբատ Խաչատրյան):

սարակութիւնը մեր դատին ծանօթացնելու»⁶: Սակայն «Դրոշակի» ֆրանսերէն հավելվածի հրատարակման հարցը հետագայում բարդ փոխակերպումների ենթարկվեց՝ ի վերջո հանգելով նույնպես ֆրանսերէն, բայց ոչ կուսակցական «Pro Arménia»-ի տպագրության գաղափարին: Մանավանդ որ ի սկզբանէ նեղ կուսակցական մոտեցումը հակասում էր երկրորդ ընդհանուր ժողովի որոշումներով եվրոպական քարոզչությանը վերագրված դերին ու նշանակությանը: Որովհետև լուծման կարոտ խնդիրը ոչ թէ կուսակցության գաղափարների տարածումն էր, այլ Արևմտյան Հայաստանի լեռներում անհավասար ու զոհառատ պայքար մղող ժողովրդի իրավունքների հիմնավորումն ու պաշտպանությունը:

Արդէն 1890-ական թթ. կեսերի դաժան կոտորածների շրջանում եվրոպայում մեծացել էր հետաքրքրությունը հայերի հանդէպ, ուստի սուլթանական կառավարությունը միջոցներ չէր խնայում Ֆրանսիայի ու մի շարք այլ երկրների թերթերում եվրոպական հանրային կարծիքն ապակողմնորոշող հոդվածներ պատվիրելու համար: Դա է պատճառը, որ ընդհանուր ժողովից հետո Քր. Միքայելյանը հանդիպումներ ունեցավ հայ մամուլի այն ներկայացուցիչների հետ, որոնք համապատասխան գիտելիքներ ու մտավոր ներուժ ունեին եվրոպական քարոզչության գործին ծառայելու համար: Դրանցից էր ճանաչված հրապարակագիր Խաչատուր Մալումյանը, որը դեռևս «Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան» հիմնադիր ժողովների շրջանում հայտնի էր որպես Գրիգոր Արծրունու «alter ego»-ն: Գրիգոր Արծրունու մահվանից հետո վերջնականապես ձեղքված մշակական ճամբարի այս վառ ներկայացուցիչն իր հետագա կյանքը կապեց ՀՅԴ հեղափոխական պայքարի հետ՝ 1915 թ. դառնալով Մեծ եղեռնի զոհերից մեկը:

Նույն նպատակով Քր. Միքայելյանը եվրոպական քարոզչության գործում ներգրավեց նաև մեկ այլ «վետերանի»՝ «Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան» նախկին կենտրոնական վարչության անդամ Հովհ. Լոռու-Մելիքյանին, և միայն վերջինիս աներձագը՝ տաղանդավոր գրող, սակայն իր գրչի տակ անմահացած հերոսների նման բուրժուականացած Ալ. Շիրվանզադեն էր, որ այդ-

6 «Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», էջ 64:

պես էլ անհաղորդ մնաց հայ երիտասարդությանը պայքարի ու մաքառումի ուղիով առաջնորդող Քրիստափորի հորդորներին:

2. Եվրոպական քարոզչության կազմակերպական ու ֆինանսական խնդիրները

ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովից ընդամենը մի քանի ամիս անց՝ 1898 թ. նոյեմբերին, Եվրոպա մեկնած Քր. Միքայելյանը դեռևս Կովկասում գտնվելու ժամանակ նախապատրաստական աշխատանքներ էր ծավալել ՀՅԴ եվրոպական քարոզչության համար անհրաժեշտ դրամական միջոցներ հայթայթելու նպատակով:

Դեռևս 1895 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում տեղի ունեցած Բարը Ալիի ցույցին հաջորդած զանգվածային կոտորածների շրջանում ցարական Ռուսաստանի ոստիկանության դեպարտամենտի ներքին գրագրության մեջ բազմիցս արձանագրվել էր այն իրողությունը, որ հայ ազատամարտի գործիչները սկսել էին մեծ ուշադրություն դարձնել բուռն վերելք ապրող Բաքվի նավթարդյունաբերական շրջանից գումար հայթայթելու և այն զենքի ու զինամթերքի ձեռքբերմանը ծառայեցնելու գործին: Արդեն այդ օրերի գաղտնի զեկուցագրերից պարզվել էր, որ դրամական միջոցների հավաքման գործը կոորդինացնում էր Թիֆլիսում բնակվող Քրիստափոր Միքայելյանը: Նրան օգնում էին ՀՅԴ Բաքվի կազմակերպության («Ոսկանապատ») առանցքային դեմքերը՝ Ներսես Դավթյանը (Հրաշալի), Ստեփան Տեր-Մկրտչյանը (Գագիկ) և Լևոն Թադևոսյանը (Պապաշա): Հայտնի էր դարձել նաև, որ տեղի մեծահարուստներից ՀՅ Դաշնակցության զանազան ձեռնարկների համար դրամ հատկացնող հիմնական դեմքը Համբարձում Մելիքյանն էր:

Բաքուն որպես կուսակցության ֆինանսավորման աղբյուր դիտարկվելու դաշնակցական ավանդույթը գալիս էր նրա հիմնադրման օրերից: «Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան» հիմնադիր ժողովների շրջանում կուսակցության դրամարկղ մտած առաջին խոշոր գումարը հատկացրել էին Բաքվի նավթային շրջանի ինժեներները՝ Կոնստանդին Խատիսյանի գլխավորությամբ: Վերջինիս՝ քաղաքական ասպարեզից հեռանալուց հետո էլ նրանք շարունակեցին այդ գործը, բայց արդեն 1880-ականների «Հայրենասերների միության» անդամ Միքայել Զալյանի և «Հայ Յեղափոխականների Դաշնակցու-

թեան» առաջին կենտրոնական վարչության անդամ Աբրահամ Դաստակյանի հետ: Ուստի պատահական չէ, որ, նախաձեռնելով ՀՅԴ եվրոպական քարոզչության գործը, Քր. Միքայելյանը կրկին ուշադրություն դարձրեց Բաքվի վրա և այդ նպատակով մինչև իր՝ Եվրոպա մեկնելը ձեռք բերեց որոշակի պայմանավորվածություններ տեղի մեծահարուստ հայերի հետ: ՀՅԴ երկու բյուրոների համակարգի առկայության պայմաններում դրանց կատարման ընթացքը վերահսկվում էր Արևելյան բյուրոյի և անձամբ Սիմոն Զավարյանի կողմից ընդհուպ մինչև «Փոթորիկ»-ի գործի սկզբնավորումը: Իսկ ՀՅԴ եվրոպական քարոզչությունը Օսմանյան կայսրության հպատակ այլ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հետ շաղկապելու գործը հիմնականում դրված էր Բուլղարիայում հաստատված Արևմտյան բյուրոյի մյուս առանցքային անդամի՝ Ռոստոմի ուսերին, որը նաև կենդանի կապ էր ապահովում Կ. Պոլիս թափանցած դաշնակցականների և Սոֆիայում ու Պլովդիվում ապրող բուլղար-մակեդոնական շարժման առաջնորդների միջև:

Թիֆլիսից ժնև անցած Քր. Միքայելյանը Ռոստոմից պահանջում է բուլղար-մակեդոնական շարժման առաջնորդների հետ քննարկել 1899 թ. սպասվող Լա-Հեյի (Հաագայի) խաղաղության 1-ին միացյալ կոնֆերանսին համատեղ դիմում ուղարկելու հարցը: Այդ կոնֆերանսը, որը հրավիրվում էր Ռուսաստանի կայսր Նիկոլայ Երկրորդի նախաձեռնությամբ, ժամանակակիցներն անվանում էին զինաթափման կոնֆերանս⁷, իսկ հետագա ուսումնասիրողները՝ ՄԱԿ-ի նախատիպ: Կոնֆերանսում Հայկական հարցը բարձրացնելու վտանգը զգում էին նաև օսմանյան իշխանությունները: Ուստի մինչև ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովը նրանք Կ. Պոլսի նշանավոր ամիրա Արթին փաշա Տատյանի ու նրա հարազատների միջոցով պատվիրակներ էին ուղարկել ժնև՝ դաշնակցականների հետ անպաշտոն բանակցություններ սկսելու համար: Բարենորոգումների մասին որոշակի խոստումներ տալով ժնևում գտնվող Ռոստոմին՝ նրանք փորձում էին ժամանակ շահել ու կանխել հայերի և բուլղար-մակեդոնական շարժման առաջնորդների համատեղ քայլերը: Ուստի այդ հարցով երկրորդ ընդհանուր ժողովի ընդունած որոշումների⁸ հիման վրա ժնև անցած Քր. Միքայել-

7 Պաշտոնական անվանումը՝ «Conférence internationale de la Paix» կամ, ըստ Ֆ. Մարտենսի, «La conférence de la Paix à la Haye»:

8 Տե՛ս «Նիւթեր Հ.Յ. Պաշնակցութեան պատմութեան համար», էջ 69:

յանը նույնպես հանդիպեց թուրքական կողմի անպաշտոն պատվիրակների հետ: Նա պահանջեց Արթին փաշա Տատյանի եղբորորդի Տրդատ Տատյանից՝ «այլևս մեզ հետ տեսնուելու յոյսեր չունենայ, եթէ կրկին մտածի ժընել գալ առանց ուղղակի պաշտօնական լիազօրութեան կառուարութեան կողմից»⁹: Հասկանալի է, որ թուրքական կառավարությունը պաշտոնական բանակցություններ չէր վարի իր դեմ պայքարող հայ հեղափոխականների հետ, ուստի նման պատասխանը փաստացի մերժման էր հավասար: Բացի դրանից՝ թուրքական իշխանությունների՝ Լա-Հեյի կոնֆերանսում միջազգային հանրությանն ապակողմնորոշելու փորձերը կանխելու համար Քր. Միքայելյանը հանձնարարեց Բուլղարիայում գտնվող Ռոստոմին արագացնել բուլղար-մակեդոնական շարժման առաջնորդների հետ միասնական հայտարարության ընդունումը: 1899 թ. մայիսի 1-ին Սոֆիայում սպասվում էր Մակեդոնական կոնգրեսը, ուստի այդ հարցը ձգձգվեց և ի վերջո ընդունեց ոչ թե միացյալ ուժերով կոնֆերանսին դիմելու, այլ **կոնֆերանսի առիթով** միացյալ հայտարարություն անելու տեսք: Պատճառն այն է, որ Մակեդոնիայի ազատագրության համար պայքարող բուլղար հեղափոխականների Մակեդոնական կոնգրեսի ընտրած մակեդոնական նոր կոմիտեն հայտնեց Ռոստոմին, որ «ուղղակի դիմումը դիպլոմատներին հակառակ կը լինէր իրենց խղճին»¹⁰:

ՀՅ Դաշնակցության քաղաքական պայքարում եվրոպական համալսարաններում ուսանող նոր սերնդին ներգրավելուց և բուլղար-մակեդոնական շարժման առաջնորդների, հույների ու ասորիների հետ եղած կապերը համագործակցության վերածելուց բացի՝ կուսակցության ղեկավարությունը զգում էր նաև հայ ժողովրդի եվրոպացի բարեկամների աջակցության կարիքը: Դրա համար առավել սերտ կապեր էին հաստատվել 1893-1896 թթ. Կ. Պոլսում բնակված, իսկ հետագայում ֆրանսիական «Illustration», «Aurore» և «Europeen» թերթերում Հայկական հարցը ջերմորեն պաշտպանած հրապարակախոս, բանաստեղծ ու մեծ մարդասեր Պիեռ Քիառի¹¹ հետ: Այդ նպա-

9 «Քրիստափոր Միքայելեանի նամակները», Պէյրուք, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1993, էջ 60:

10 Ռոստոմ, Նամականի, մահուան ութսունամեակին առթիւ Պէյրուք Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1999, էջ 158:

11 Մեծ մարդասեր ու հայասեր **Պիեռ Քիառը** ծնվել է 1864 թ. Փարիզում: Սովորել է «Լիսե Քոնդորսե»-ում և Ֆրանսիայի այլ ուսումնական հաստատություններում՝ հրապուրվելով գրականությամբ և ժամանակին մեծ տարածում գտած փնմվիզմի պոեզիայով: 1884 թվականից աշխատակցել է ֆրանսիական մամուլին և որոշ ժամանակ զբաղվել հեղափոխական գործունեությամբ՝ տարվելով

տակով կատարվում էր նաև կողմերի քաղաքական դիրքորոշումների հստակեցում ու մերձեցում: Քիառը բացասաբար էր տրամադրված սուլթան Համիդի վարչակարգի հանդեպ և հանդես էր գալիս Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների ազատագրության օգտին: Ուստի Ժնև անցնելուց հետո Քր. Միքայելյանն անընդհատ խնդրում էր Կ. Պոլսում գտնվող Գարեգին Խաժակին թարմ տեղեկություններ հաղորդել Թուրքիայի մայրաքաղաքից՝ «Aurore»-ի խմբագրին փոխանցելու համար: «Սա մեծապես կը նպաստի մեր կայերին ֆրանսիական բարեկամների հետ եւ «Grand Assassin»¹² բաժնի ճոխացմանը «Aurore»-ում: Եթէ Ծաղկից¹³ յաճախ Ժընև գրելը յարմար չէ, մենք կարող ենք տալ Միքայելի¹⁴ հասցէն, որ ուղղակի Փարիզ կարելի լինի ուղարկել, այնտեղ Միքայելը կը թարգմանի եւ կը յանձնի»¹⁵, - բացատրում էր Քր. Միքայելյանը:

Արմատական ուղղվածություն ունեցող «Aurore»-ում, որի համասեփականատերն էր **Ժորժ Կլեմանսոն**¹⁶, Պիեռ Քիառի մերկացնող հողվածների պատճառով «մեծ մարդասպանի» կամ, ինչպես Պիեռ Քիառն ինքն էր բնորոշում, «Grand Assassin»-ի ներկայացուցիչները պատրաստվում էին դատ բացելու նրա դեմ: Տեղեկանալով այդ մասին՝ Քր. Միքայելյանը «Aurore»-ի խմբագրին աջակցելու համար եվրոպական երկրներում ուսանող հայ երիտասարդների ջանքերով շուրջ 5600 ֆրանկ հավաքեց: Բայց դատը չկայացավ, ուստի առաջ եկավ այդ միջոցների մի մասը վերադարձնելու, իսկ մյուս մասը մամուլի այլ օրգանների վրա ծախսելու խնդիրը: Տարբերակները բազմաթիվ էին՝ «Դրոշակի» ֆրանսերեն հավելվածի հրատարակումից մինչև Ժ. Կլեմանսոյի կամ Պ. Քիառի հիմնած որևէ թերթի համապա-

անարխիստների գաղափարներով: 1893-1896 թթ. լինելով Կ. Պոլսում և աշխատելով հայկական վարժարաններում՝ դարձել է համիդյան կոտորածների ականատեսը: Մահացել է 1912 թ. փետրվարի 4-ին Փարիզում՝ արժանանալով ՀՅ Դաշնակցության և ողջ հայ ժողովրդի աննախադեպ մեծարանքին: Փետրվարի 8-ին Պեր Լաշեզում կայացած նրա հուղարկավորության արարողության հիմնական բանախոսներն էին **Վարդգեսը** (Սերենկյուլյան), **Է. Ակնունին** (Խաչատուր Մալումյան) և **Գարեգին Խաժակը** (Չազալյան): Իսկ Պիեռ Քիառի հետ վերջին հրաժեշտի պահին հայկական անմահ շարականները կատարեց **Կոմիտաս վարդապետը**: Ավելի մանրամասն տես «Սգապսակ Փիեր Քիեռե-ի յիշատակին», Կ. Պոլիս, 1913:

12 Մեծ մարդասպան:

13 Ծաղիկ-Կռվածաղիկ – Կ. Պոլսի ծածկագրված անվանումը:

14 Միքայել Հովհաննիսյան – Վարանդյան:

15 «Քրիստափոր Միքայելեանի նամակները», էջ 101:

16 **Կլեմանսո ժորժ** (1841-1929) – ֆրանսիացի ականավոր քաղաքական ու պետական գործիչ: 19-րդ դարի վերջերին եղել է ռադիկալ կուսակցության առաջնորդը և իր արմատական հայացքների ու մարտնչող բնավորության համար ստացել **Վագր** կեղծանունը: Հետագայում՝ ֆրանսիայի վարչապետ:

տասխան բաժնի օգտագործումը: Ի վերջո կուսակցությունը կանգ առավ «Դրոշակից» ու ֆրանսիական թերթերից առանձին «Pro Arménia»-ն հրատարակելու տարբերակի վրա, որի խմբագիրը դարձած Պ. Քիառին սեփական տեսակետներն արտահայտելու ազատություն էր տրվում: Փաստորեն, նա իրավունք չուներ միայն քննադատելու ՀՅԴ-ի գլխավորած հայ ազատամարտը, իսկ ներհայկական հասարակական ու կուսակցական խնդիրներին անդրադառնալիս պետք է խորհրդակցեր ՀՅԴ ներկայացուցիչների¹⁷ հետ: Մնացած հարցերում, այդ թվում՝ մեծ տերությունների քաղաքականության վերաբերյալ դիրքորոշում ձշտելու ասպարեզում, Պ. Քիառն ազատ էր:

3. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսը որպես «Ժամադրավայր»

Արտաքին կողմնորոշումների հանգամանքը, որը սկզբում կարևոր չէր թվում, շուտով նոր խնդիրների տեղիք տվեց «Pro Arménia»-ի հրատարակության շուրջ հայ բուրժուազիայի և ՀՅԴ-ի միջև Փարիզում սկսված բանակցություններում: Բանն այն է, որ բանակցություններն ընթանում էին Փարիզում բացված 1900 թ. համաշխարհային ցուցահանդեսի¹⁸ օրերին, որին լայն մասնակցություն ուներ ցարական Ռուսաստանը՝ իր վերելք ապրող տնտեսությամբ ու մշակույթով: Բնականաբար, այստեղ էր ժամանել նաև Ռուսաստանում բուռն վերելք ապրող հայ բուրժուազիայի ընտրանին՝ Միքայել Արամյանցի ու Ալեքսանդր Մանթաշյանցի գլխավորությամբ: Բայց համառուսաստանյան շուկայի հետ կապված և դրանից բխող իր քաղաքական դիրքորոշմամբ առաջնորդվող հայ բուրժուազիան ազատ աշխարհի խորհրդանիշը դարձած Փարիզում անգամ չկարողացավ ազատվել հայ ազատամարտի առաջնորդների շահագրգիռ ներկայությունից: Որովհետև Փարիզում էր նաև Քր. Միքայելյանը, որը հաստատվել էր իր հին ընկեր Վանյայի (Հովհ. Լոռու-Մելիքյան) բնակարանում, քանզի տատանվում էր անգամ առանձին սենյակ վարձելու հարցում: Մեծահարուստ Համբարձում Մելիքյանը, որի հետ նա կապեր ուներ դեռևս Բաքվից, Փարիզում խոստանում է

17 Խոսքն առաջին հերթին Միքայել Վարանդյանի և Հովհ. Լոռու-Մելիքյանի մասին էր:
18 Համաշխարհային ցուցահանդեսը («Exposition universelle») կայացել է Փարիզում 1900 թ. ապրիլի 15-ից նոյեմբերի 12-ը:

ՀՅԴ եվրոպական քարոզչության համար տրամադրել 2000 ռ. ու նաև հանդիպում կազմակերպել Միքայել Արամյանցի և Ալեքսանդր Մանթաշյանցի հետ: Հանդիպմանը ներկա էր լինելու նաև Քրիստափորին ներկայացնող մի այնպիսի անձ, «որից կարողանային յիշեալները մի փոքր ամաչել»¹⁹: Եվ քանի որ «ամաչեցնողի» դերը ստանձնում է հեղինակավոր պրոֆեսոր Յուրի (Գեորգի) Ղամբարյանը²⁰, թվում էր, թե դա կապահովի ձեռնարկի հաջողությունը:

Շատ չանցած, սակայն, տեղի ունեցավ ձիշտ հակառակը. թեև Համբարձում Մելիքյանն ու Յուրի Ղամբարյանը, հանդիպելով Արամյանցին, ստանում են նրա հավանությունը, սակայն վերջինս իր հերթին հայտնում է, որ առանց Մանթաշյանցի ինքը ոչինչ չի կարող անել: Եվ ինչպես վկայում է Քր. Միքայելյանը, «Մանթաշեանը փախուստ տուեց, եւ Արամեան ու Մանթաշեան ջուրն ինկան: Մնացին այդպիսով Մելիքեան, Իվան Թումայեան եւ մեզ ծանօթ ինտելլիգենտ բուրժուաներ (Պատուական, բժիշկ Տէր Միքայէլեան Ստեփան, Ներսէս Աբէլեան, ինժիներ Տէր Օհանեան, Արշակ Պարոնեան): Ժողովին հրաւիրուեցին դրանք եւ այդ ժողովն էր, որ որոշեց 30.000 ֆր. ապահովել իւրաքանչիւր տարուայ համար՝ ամենաքիչը 3 տարուայ ընթացքում, մինչ կեանքը կը պարզի ապագայի պահանջները»²¹:

Թվում էր, թե բոլոր հարցերը կարգավորված են, բայց, շատ չանցած, Պ. Քիառի բնակարանում տեղի է ունենում պրոֆ. Յու. Ղամբարյանի, Քր. Միքայելյանի և Հովհ. Լոռու-Մելիքյանի հանդիպումը, որի ընթացքում հանկարծ «Ղամբարեանը կտրուկ պայման դրեց, որ թերթը Ռուսաստանի դէմ ոչինչ չպէտք է գրէ: Քիյառը եւ մենք դիմադրեցինք ու բանը վերջացաւ նրանով, որ Ղամբարեանը հրաժարուեց այդ գործում խառնուելուց»²²: Վտանգ առաջացավ նաև, որ պրոֆ. Յու. Ղամբարյանն իր պահանջի մասին կարող է գրել

19 «Քրիստափոր Միքայելեանի նամակները», էջ 178:

20 **Ղամբարյան Յուրի (Գեորգի)** (1850-1926) – ծնվել է Թիֆլիսում մեծահարուստ Ստեփան Ղամբարյանի ընտանիքում, որի ընդարձակ տանն էր ապրում նաև իր փեսայի՝ Հովհաննես Խատիսյանի ընտանիքը: Այստեղ են ծնվել ու մեծացել նրա ազգականներ՝ ՀՅԴ հիմնադիր ժողովների մասնակից Կոստանդին Խատիսյանը և նրա կրտսեր եղբայր, հետագայում ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը: Յուրի Ղամբարյանը, ով մասնագիտությամբ իրավաբան էր, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, 1890 թվականից գործակցել է ՀՅԴ-ի հետ Ռուսաստանի հայկական համայնքներում դրամահավաքի իրականացման հարցում: 1900 թ. Փարիզում մասնակցել է հումանիտար գիտությունների ռուսական բարձրագույն դպրոցի հիմնադրմանը և ընդհանրապես համարվում է Ռուսաստանի սոցիոլոգիական դպրոցի հիմնադիրը: 1919 թ. դարձել է Հայաստանի համալսարանի առաջին ռեկտորը:

21 «Քրիստափոր Միքայելեանի նամակները», էջ 178:

22 Նույն տեղում:

Բաքու՝ Համբարձում Մելիքյանին, ուստի դժվարությամբ սկսվող գործը կարող էր ձախողվել: Մյուս կողմից՝ Պ. Քիառը 1900 թ. հոկտեմբերի կեսերից աշխատանքի անցնելու համար 10-12 հազար ֆրանկի նախահաշիվ էր պահանջում:

Քր. Միքայելյանը, սակայն, անտեսելով նոր դժվարություններն ու արգելքները և հիմնվելով եղած սահմանափակ միջոցների վրա, կամային որոշում կայացրեց սկսելու «Pro Arménia»-ի հրատարակության գործը: Ավելին՝ շուտով նրան հաջողվեց համոզել պրոֆ. Յու. Ղամբարյանին, որ փոքր-ինչ այլ բնույթի նամակ գրի Բաքու՝ Համբարձում Մելիքյանին, և խմբագրության աշխատանքներին իր չմասնակցելը բացատրի սոսկ Ռուսաստան վերադառնալու ցանկությամբ ու խնդրի իր փոխարեն «դրամները ուղարկել իսկոյն Իվան Օսիպիչ Թամարեվի եւ պրոֆեսոր Մաք. Մաքսիմիչ Կովալեսկու անուն»²³:

«Pro Arménia»-ի հրատարակության և ընդհանրապես ՀՅԴ եվրոպական քարոզչության ֆինանսավորումն ապահովելու գործում Քր. Միքայելյանի դրսևորած անօրինակ կամքն ու համառությունը աստիճանաբար նրան բերում են այն եզրակացությանը, որ համառուսաստանյան տեսլականներով առաջնորդվող հայ բուրժուազիայի հսկայական հարստության գոնե մի չնչին մասն ազգի ու հայրենիքի ազատագրության գործին ծառայեցնելու համար անհրաժեշտ են ավելի գործուն ու կտրուկ միջոցներ: Ուստի 1901 թ. գարնանը Բուլղարիայի Ֆիլիպե քաղաքում կայացած «ՀՅԴ Կամքը ներկայացնող մարմնի» ժողովը, որին մասնակցում էին զույգ բյուրոների ու պատասխանատու կենտրոնական կոմիտեների ներկայացուցիչները, ընդունեց հայ մեծահարուստներից պարտադիր հանգանակություններ կատարելու մասին իր պատմական որոշումը՝ սկիզբ դնելով «Փոթորիկ»-ի գործին, որից հետո Անդրկովկաս վերադարձած Քր. Միքայելյանի խորհրդով պրոֆ. Յու. Ղամբարյանը նույնպես շարունակեց աջակցել «Pro Arménia»-ի համար միջոցների հանգանակմանը՝ համագործակցելով Արևելյան բյուրոյի և անձամբ Միմոն Զավարյանի հետ: Եվ հենց պրոֆեսոր Յուրի Ղամբարյանը դարձավ այն ազդեցիկ բանագնացը, որը կարողացավ փարատել հեղափոխականներին դրամ հատկացնելու հարցում Ալ. Մանթաշյանցի ու-

23 Նույն տեղում, էջ 180:

նեցած վախերը: Այս առիթով Ս. Զավարյանը Թիֆլիսից Արևմտյան բյուրոյին ուղղած 1901 թ. հուլիսի 5 (18)-ի նամակում գրում էր, որ ինքը «իմաստուն խորհուրդ» է ստացել մասնավոր բարեկամներից, որ «Պրոֆ. Ղամբարովը մենակ գնայ Մանթաշովի մոտ, բացատրելու նրան մեր գործերը, մասնաւորապէս Pro Armenia եւ նրա նման հրատարակութիւնների անհրաժեշտութիւնը եւ խնդրելու այդ հրատարակութիւնների համար ապահովութիւն»²⁴, որովհետեւ «եթէ երկու հոգի մօտը գնան, կը վախենայ եւ բան չի տայ»²⁵: Դա էր պատճառը, որ ի վերջո հարցը լուծվեց Եվրոպայում, քանզի միայն նման անվտանգ միջավայրում ներկայանալով ու «մուծվելով»՝ Մանթաշյանցն ու Արամյանցը հաղթահարեցին մի կողմից ցարական իշխանություններից, մյուս կողմից հայ հեղափոխականներից ունեցած վախերը:

4. ՀՅ Դաշնակցությունը և Սոցիալիստական ինտերնացիոնալի 5-րդ կոնգրեսը

Փարիզում 1900 թ. գարնանը ողջ շքեղությամբ իր դռները բացած համաշխարհային ցուցահանդեսը տոն էր ոչ միայն Նոր Ժամանակներում առաջադիմության դրոշակակիրը դարձած եվրոպական բուրժուազիայի համար: Քանզի վերջինս արդեն գիտակցում էր այդ առաջադիմության քաղցր պտուղները միայնակ վայելելու անհեռանկարայնությունը: Տվյալ հրատապ պահանջը Սոցիալիստական ինտերնացիոնալի 5-րդ կոնգրեսում հստակորեն դրսևորվեց հեղափոխական-մարքսիստների ու բարեփոխական-բեռնշտայնականների տարանջատման տեսքով: Մինչդեռ, ի տարբերություն եվրոպական բուրժուազիայի, համառուսաստանյան ընդարձակ շուկայում հսկայական միջոցներ կուտակած հայ մեծահարուստները արյունաքամ լինող հայրենիքի ազատագրության գործի համար միայն չնչին փշրանքներ էին հատկացրել թուրքական բռնապետության դեմ մաքառող հարազատ ժողովրդի զավակներին: Ավելին՝ 1890-ականների սկզբներից Սոցիալիստական ինտերնացիոնալն ինքն էր առանձին ազգային ճակատներ բացել նման բռնապետությունների դեմ պայքարող սոցիալիստական ու սոցիալ-դեմոկրատական կուսա-

24 Սիմոն Զավարեան. մահուան եօթանասունամեակին առթիւ, հատ. Բ., Պէյրուի, Համագայինի Վահէ Սէթեան տպարան, 1992, էջ 142:

25 Նույն տեղում:

կցությունների համար: Քանզի 1889 թ. հիմնված Սոցիալիստական ինտերնացիոնալի երկրորդ (16–22–ը օգոստոսի 1891 թ., Բրյուսել) և երրորդ (6–12–ը օգոստոսի 1893 թ., Ցյուրիխ) կոնգրեսները բանաձևեր էին ընդունել առանձին երկրների ու ժողովուրդների ազգային սոցիալիստական կուսակցությունների ստեղծման անհրաժեշտության մասին: Ուստի 1990–ականներին Սոցիալիստական ինտերնացիոնալը «ծննդյան վկայականներ» էր տրամադրել Արևելյան Եվրոպայի ու Առաջավոր Ասիայի բազմաթիվ երկրների սոցիալիստական ու սոցիալ–դեմոկրատական կուսակցություններին՝ հատուկ բանաձևով թույլատրելով անգամ նրանց կողմից Արևմտյան Եվրոպայի ժողովրդավարական իրողությունների համար խորթ՝ պայքարի ոչ խորհրդարանական մեթոդների կիրառումը²⁶: Իսկ Սոցիալիստական ինտերնացիոնալի չորրորդ՝ Լոնդոնի կոնգրեսը, որն անցկացվեց 1896 թ. հուլիսի 27–ից օգոստոսի 1–ը, դատապարտելով գաղութատիրությունը, կանգնել էր դրա դեմ պայքարող ճնշված ժողովուրդների կողքին, որոնց թվում էր նաև սուլթանական բռնապետության դեմ մաքառող արևմտահայությունը:

Սոցիալիստական ինտերնացիոնալի կոնգրեսներից առաջինը, որին գործուն մասնակցություն ունեցավ հայ ազատամարտի առաջատար ուժը դարձած, սակայն դեռևս պաշտոնապես Սոցիալիստական ինտերնացիոնալի մաս չհանդիսացող ՀՅ Դաշնակցությունը, 1900 թ. սեպտեմբերին Փարիզում կայացած 5–րդ կոնգրեսն էր: Ընդ որում, դա նախ և առաջ տեղի ունեցավ կոնգրեսի պաշտոնական մասի բացվելուց առաջ հրավիրված մի շարք համաժողովներում, որոնցում ակտիվ դերակատարություն ստանձնելու անհրաժեշտությունը ժխտում հրատարակվող կուսակցության պաշտոնաթերթը հիմնավորում էր կոնգրեսի դաշնակցական մասնակիցների հետևյալ փաստարկով. «Մենք այսօր Տաճկաստանումը չենք, այլ Փարիզում, մենք այսօր Արևելքի տիպական աշխարհումը չենք, այլ առաջադիմող Արևմուտքում, ուր՝ ի միջի այլև այլ գիշատիչների՝ ժողովուրդներն են նաև համաշխարհային ինտելիգենցիայի ներկայացուցիչները և ուր անշուշտ կը լինեն մեզ լսող–հասկացողները»²⁷:

26 1990–ականներին ձևավորված այդ կուսակցությունների ընդարձակ ցանկը տե՛ս այս ուսումնասիրության առաջին մասում («Վեմ», Եր., 2022, N 2, էջ 47):

27 «Հայկական հարցը Փարիզի համաժողովներում (Նամակներ Ֆրանսիայից)», «Դրօշակ», ժընեվ, 1900, հոկտեմբեր, N 8 (109), էջ 122:

Դեռևս 1900 թ. սեպտեմբերի 18-ին տեղի ունեցած սոցիալիստ ուսանողների միջազգային համաժողովում, որին հրավիրված էին ու հերթով նախագահում էին Սոցիալիստական ինտերնացիոնալի ճանաչված դեմքերը՝ Էնրիկո Ֆերրին, Ժան Ժորեսը և Էմիլ Վանդերվելդեն, «Մի ուսանողի կողմից առաջարկություն եղաւ համաժողովին՝ համակրութիւն յայտնել տաճկական լծի տակ դեգերուող մակեդոնացի, հայ եւ ուրիշ ժողովուրդների հասցէին»²⁸, որն ընդունվեց բուն ծափահարություններով ու «Կորչի սուլթանը» և այլ կարգախոսներով: Իսկ մեկ օր անց՝ 1900 թ. սեպտեմբերի 19-ին, Փարիզի համաշխարհային ցուցահանդեսի շրջանակներում հրավիրված «Միջազգային դպրոցի» ռուսական բաժնում, որը նախագահում էր հայտնի սոցիոլոգ Մաքսիմ Կովալևսկին, և որտեղ դասախոսություններով հանդես էին գալիս տարբեր ազգերի ներկայացուցիչները, Քր. Միքայելյանը ռուսերենով դասախոսություն կարդաց «Հայկական հարցը Թուրքիայում» թեմայով: Նա բացահայտեց հայերի բնաջնջմանն ուղղված սուլթան Համիդի քաղաքական ծրագրերը, որից հետո ամբիոն բարձրացած Մաքսիմ Կովալևսկին ներկայացրեց պատմության ընթացքում հայերի՝ մարդկությանը մատուցած «բոլոր քաղաքակրթական ծառայությունները» և հույս հայտնեց, որ «նոյնիսկ այժմեան ծանր պայմաններում՝ հայ ժողովուրդը հեռու պետք է պահի իրեն ունեյուսահատութիւնից»²⁹:

Եվ վերջապես՝ սեպտեմբերի 23-ին Փարիզի «Վագրամի սրահում» իր աշխատանքները սկսեց Սոցիալիստական ինտերնացիոնալի 5-րդ կոնգրեսը: Պաշտոնապես դեռևս Սոցիալիստական ինտերնացիոնալին չանդամագրված ՀՅ Դաշնակցության ներկայացուցիչները մուտք գործեցին կոնգրեսի սրահ ու մասնակցեցին նրա աշխատանքներին «Դրոշակի» խմբագրության տոմսակներով՝ որպես մամուլի ներկայացուցիչներ: Կոնգրեսին մասնակցում էին 2500-ից ավելի պատվիրակ և միջազգային սոցիալիստական շարժման ողջ ընտրանին՝ Փարիզի կոմունայի հերոս Պոլ Վայանը, Ժան Ժորեսը, Կառլ Կանուցկին, Էնրիկո Ֆերրին, Էմիլ Վանդերվելդեն և ուրիշներ: Այդքան մեծ թվով պատգամավորների ներկայության պայմաններում ՀՅ Դաշնակցության ներկայացուցիչները կարողացան կոնգրե-

28 Նույն տեղում:

29 Նույն տեղում:

սի միջազգային խաղաղության հարցերով մասնաժողովի աշխատանքներում ներառել հայկական կոտորածների ու Հայկական հարցի շուրջ քննարկումները, որոնք տեղի ունեցան սեպտեմբերի 26-ին՝ օրվա երկրորդ կեսին: Կոնգրեսում հայկական կողմի առաջարկները ներկայացրեց Մ. Վարանդյանը, որից հետո՝ կոնգրեսի վերջին օրը՝ սեպտեմբերի 27-ին, լիագումար նիստում ընթերցվեց և ծափերով հավանության արժանացավ ու վավերացվեց միջազգային խաղաղության հարցերով մասնաժողովից ստացված՝ հայերին վերաբերող բանաձևի առաջարկը, որում նշվում էր. «**Փարիզի սոցիալիստական միջազգային համաժողովը, վերստին շեշտելով եղբայրական համակրության զգացմունքները, որոնք պիտի միացնեն բոլոր ժողովուրդներին, գայրոյթով բողոքում է Հայաստանում կատարած բռնաբարությունների, խժղությունների ու ջարդերի դէմ, եւ մատնացոյց անելով երկու աշխարհների բանուորներին գանազան կապիտալիստ պետութիւնների ոճրագործ մեղսակցութիւնը, հրաւիրում է պարլամենտական սօցիալիստ խմբերին, ամէն մի դէպքում միջամտել յօգուտ անարգաբար հարստահարած հայ ժողովրդի, որին կօնգրէսը ուղղում է իր ջերմ ու սերտ համերաշխութեան հաւաստիքը** (ընդգծումը մերն է – Գ. Խ.)»³⁰:

ՀՅ Դաշնակցությունն ակտիվորեն մասնակցեց նաև 1900 թ. հոկտեմբերի 1-2-ը համաշխարհային ցուցահանդեսի շրջանակներում սոցիալիստ հրապարակախոսների սինդիկատը գլխավորող **Վ. Ժակլարի**³¹ կազմակերպած «Սոցիալիստական մամուլի առաջին համաժողովին», բայց արդեն որպես պաշտոնական հրավեր ստացած «Դրոշակի» խմբագրություն: Այստեղ ընդհանուր խաղաղությանն ու արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերի քննարկման ընթացքում նույնպես ընդունվեց համապատասխան հայտարարագիր, որի առաջին կետը կոչ էր անում սոցիալիստական մամուլին լայնորեն լուսաբանելու սուլթան Աբդուլ Համիդի իրականացրած հայերի սարսափելի կոտորածները, իսկ երկրորդ կետը պնդում էր, որ սոցիալիստական մամուլը պետք է աշխատի առաջ բերել մեծ պետությունների միջամտությունը, «որպէսզի Տաճկաստանում հաստատուի մի տանելի ուժիմ օտոմանեան բոլոր քաղա-

30 Նույն տեղում, էջ 124:

31 **Ժակլար Վիկտոր** (1840-1903) – ֆրանսիացի հեղափոխական-բլանկիստ, լրագրող, Փարիզի կոմունայի գործիչ:

քացիների համար՝ առանց խտրության ցեղի, ազգության եւ կրօնի»³²: Այս հայտարարությունը ողջ Օսմանյան կայսրությունում ընդհանուր բարենորոգումների պահանջի շղարշի տակ որոշ չափով քողարկում էր Հայկական հարցի գոյության փաստը, ինչի վրա ուշադրություն դարձրեց ՀՅ Դաշնակցության անունից ելույթ ունեցած Մ. Վարանդյանը:

Համաշխարհային ցուցահանդեսի շրջանակներում ու դրանից դուրս գրեթե նույն օրերին տեղի ունեցան նաև այլ միջոցառումներ՝ Մարդկայնության համաժողովն ու Խաղաղության համաժողովը, որոնցից վերջինը վերածվեց Հայկական հարցի շուրջ ՀՅԴ ներկայացուցիչների ու նոր միայն միջազգային ասպարեզ մուտք գործող թուրք ընդդիմադիրների տեսակետների բախման: 1900 թ. սեպտեմբերի 30-ին ֆրանսիացի նախարար Միլերանի բացման խոսքով սկսված այդ համաժողովն իր տեսակի մեջ արդեն 9-րդն էր և անցկացվում էր ֆրանսիական կառավարության հովանու ներքո: Այդ առիթն օգտագործելով՝ «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանը ներկայացրեց «Հայկական հարցը խաղաղության տեսակետից» վերտառությամբ մի հիշատակագիր, որը 18 ստորագրությամբ հոկտեմբերի 5-ին դրվեց քննարկման՝ արժանանալով մեծ ուշադրության: Այստեղ ռուս սոցիոլոգ Գ. Նովիկովը և Բրյուսելի համալսարանի պրոֆեսոր Ե. Դը-Ռոբերտին իրենց ելույթներում անարգանքի պլանին գամեցին սուլթան Համիդի ջարդարարական քաղաքականությունը և պահանջեցին հարգել Բեռլինի կոնգրեսով երաշխավորված հայերի իրավունքները: Սակայն, դրան հակառակ, խաղաղության 9-րդ համաժողովում ձայն խնդրեց թուրքական ընդդիմադիր «Մեշվերեթ» թերթի խմբագիր Ահմեդ Ռիզան ու փորձեց սեպ խրել եվրոպացի ու ռուս պատվիրակների միջև և հայերի համար առանձին բարենորոգումների պահանջը փոխարինել ողջ կայսրության հպատակների վիճակի բարելավման առաջարկով: Նրա դեմ հանդես եկան ֆրանսիացի պրոֆեսոր Մառիլինեն, Մ. Վարանդյանն ու Արշակ Չոպանյանը, և ի վերջո քվեարկությամբ Ահմեդ Ռիզայի առաջարկը մերժվեց, ու հիմք ընդունվեց Բրյուսելի համալսարանի պրոֆեսոր Ե. Դը-Ռոբերտի առաջարկած հավելումը Հայկական

32 «Հայկական հարցը Փարիզի համաժողովներում (Նամակներ Ֆրանսիայից)», էջ 124:

հարցին արմատական լուծում տալու անհրաժեշտության մասին, որը ներկայացվեց Ֆրանսիայի արտգործնախարար Դելկասեին:

5. «Pro Arménia»-ի ծնունդը

ՀՅ Դաշնակցության եվրոպական քարոզչության հիմնական խոսափողի դերը ստանձնած «Pro Arménia» կիսամյա³³ պարբերականի³⁴ առաջին համարը պաշտոնապես լույս տեսավ 1900 թ. նոյեմբերի 25-ին Փարիզում Պիեռ Քիառի խմբագրությամբ և բավականին պատկառելի խմբագրական խորհրդով, որը զարդարում էին **Ժորժ Կլեմանսոյի, Անատոլ Ֆրանսի, Ժան Ժորեսի, Ֆրանսիս դը Պրեսանսեի** ու Բրյուսելի համալսարանի պրոֆեսոր **Ե. դե-Ռոբերտիի** անունները: «Pro Arménia»-ի խմբագրակազմը հիմնականում ֆրանսիական էր, ուստի նրա գլխավոր նպատակն էր միջազգային դիվանագիտության պաշտոնական լեզվով՝ ֆրանսերենով, համակողմանիորեն ներկայացնել Հայկական հարցը:

19-րդ դարի վերջերից մեծ տերությունների կառավարող վերնախավերի գաղութատիրական նկրտումներին ընդդիմանալու համար եվրոպական առաջատար երկրներում գործող սոցիալիստական ու սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների շրջանում սկսել էր ձևավորվել բռնապետական վարչակարգերի պայմաններում ազգային հարցի լուծման ընդհանուր քաղաքական պլատֆորմ: Այն հիմնվում էր նման վարչակարգերի, այդ թվում նաև՝ Օսմանյան կայսրության հետագա բարեփոխումն ապակենտրոնացման ու ֆեդերալիզացիայի գաղափարաքաղաքական սկզբունքներով իրականացնելու ելակետի վրա, որը հաշվի էր առնում արևմտյան միջարք երկրների, մասնավորապես՝ Շվեյցարիայի պատմական փորձը: ՀՅ Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովում ու դրանից հետո կուսակցության ազգային-քաղաքական պահանջների նշաձողի հետևողական իջեցումը նույնպես կատարվել էր ապակենտրոնացման ու ֆեդերացիայի գաղափարաքաղաքական սկզբունքների լայն կի-

33 Ֆրանսիական պարբերականներից վերցված նման կիսամյա կամ տասնհինգօրյա հերթափոխի «La quinzaine» բնորոշումը «Pro Arménia»-ի ամփոփագրի կամ խմբագրականի վերնագրի դերն էր կատարում:

34 Լույս էր տեսնում յուրաքանչյուր ամսվա 10-ին և 25-ին:

րառմամբ³⁵: Դրանք խիստ սրտամոտ էին մանավանդ ՀՅ Դաշնակցության հիմնադիր սերնդի ականավոր ներկայացուցիչներից երկուսին՝ Սիմոն Զավարյանին ու Հոնան Դավթյանին, որոնք համոզված ֆեդերալիստներ էին՝ ապակենտրոնացումը որպես հայ-թուրքական դիմակայության համաբալասան դիտարկող սոցիալիստներ: Այս գաղափարները մոտ էին նաև Պիեռ Քիառի հայացքներին, որի գլխավորությամբ «Pro Arménia»-ն արագորեն իր տեղը զբաղեցրեց սոցիալական ու ազգային ազատագրության համար պայքարող ֆրանսիական ու եվրոպական մամուլի մեջ:

Խմբագրությունը, հանդեսի մուտքն ազդարարող իր համառոտ խոսքում հիշեցնելով սուլթան Համիդի՝ 1894, 1895 և 1896 թվականներին կազմակերպած «մեծ կոտորածների» մասին, «Pro Arménia»-ի տպագրության հիմնական նպատակների թվարկումն ավարտում էր այն փաստի հիշեցումով, որ «Եվրոպան զինված է Բեռլինի պայմանագրով, որպեսզի վերջ դնի այս սարսափներին և դրանով նախապատրաստի մնացած ողջ Թուրքիայի վերականգնումը»³⁶: Իսկ դրան հաջորդած «Pro Arménia» վերտառությամբ ընդարձակ խմբագրականում Պիեռ Քիառը ծավալուն անդրադարձ էր կատարում 1890-ականների կոտորածների հետևանքով Հայաստանում (Արևմտյան Հայաստանում) ստեղծված դրությանը և, հիշեցնելով հայոց պատմության փառավոր էջերը, համոզմունք էր հայտնում, որ Հայաստանն անպայման վերականգնվելու է:

«Pro Arménia»-ի հենց առաջին համարում նույնպիսի ծրագրային հոդվածներով հանդես եկած խմբագրակազմի մյուս երկու անդամները նույնպես յուրահատուկ դերաբաշխումներ էին կատարել միմյանց միջև: Այսպես՝ **Ժորժ Կլեմանսոյի** «Արյունոտ ձեռքը» հոդվածն ընդարձակ էքսկուրս էր թուրքերի ջարդարարական բնավորության ու սուլթան Համիդի իրականացրած վերջին կոտորածների վերաբերյալ, մինչդեռ **Ֆրանսիս դը Պրեսանսեի**³⁷ հոդվածը վերնագրված էր «Ցարը և հայերը», որում ցարի ու սուլթանի արանքում հայտնված հայերի վիճակը բնորոշվում էր անգլերեն «between

35 Ավելի մանրամասն տես **Խուդինյան Գ.**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն, Եր., 2006, էջ 372-374:

36 «Pro Arménia », Paris, 25 novembre, 1900, N 1, p. 1.

37 **Ղը Պրեսանսե Ֆրանսիս** (1853-1914) - ֆրանսիական խորհրդարանի պատգամավոր, Մակեդոնիայի ու Հայաստանի ազատագրության համար պայքարող մտավորական և իրապարակախոս:

the devil and the deep sea»³⁸ («սատանայի և խոր ծովի միջև») արտահայտությամբ:

Ուշագրավ էր հատկապես «Pro Arménia»-ի 1901 թ. փետրվարի 25-ի համարի հենց առաջին էջում հրապարակված **Ժան Ժորեսի**³⁹ «Vigilence» («Զգոնություն») ահազանգ-հոդվածը, որով նա հիշեցնում էր նոր կոտորածների վերաբերյալ Սասունից ստացված ահասարսուռ տեղեկությունների մասին և Եվրոպային մեղադրում տեղի ունեցողի հանդեպ անտարբերության ու մեղսակցության մեջ: Նույն հոդվածն իր 1901 թ. ապրիլյան համարում «Արթնություն»⁴⁰ վերտառությամբ արևմտահայերենով տպագրած «Դրոշակը» բավականին մեծ տեղ էր հատկացրել եվրոպական առանձին երկրների մտավորականների ու քաղաքական գործիչների՝ «Pro Arménia»-ի հետ ունեցած նամակագրության հայերեն թարգմանություններիին: Դրանցում մեծ անհանգստություն կար Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած ընդհարումների ու կոտորածների մասին «Pro Arménia»-ից ստացված լրատվության կապակցությամբ: Այսինքն՝ եվրոպական բեմահարթակում «Pro Arménia»-ի սկսած քաղաքական երկխոսության մասին «Դրոշակի» միջոցով իրազեկվում էր նաև հայ հանրությունը:

Արևմտյան Հայաստանի առանձին բնակավայրերում կատարված սպանությունների և հարստահարությունների մասին «Pro Arménia»-ում պարբերաբար հրապարակվող տեղեկությունները, հաճախ արտատպվելով ֆրանսիական ու եվրոպական այլ երկրների թերթերում, ինչ-որ առումով զսպաշապիկի դեր էին կատարում թուրքական իշխանությունների համար: Ուստի «Pro Arménia»-ի «Lettres» բաժինը գնալով ավելի ու ավելի էր վերածվում արևմտահայերի հարստահարությունների վերաբերյալ նախկին տեղեկագրերը հիշեցնող ամբաստանագրերի շարքի:

Նման հրապարակումների թվի մեծացմանը զուգահեռ տպագրվում էին նաև առանձին հոդվածներ Կովկասի հայերի հանդեպ

38 «Pro Arménia», 25 novembre, 1900, N 1, p. 7.

39 **Ժորես Ժան** (1859-1914) - ֆրանսիացի սոցիալիստ, միջազգային սոցիալիստական շարժման ակամավոր գործիչ, խաղաղության համար պայքարի նահատակ, հայ ժողովրդի անկեղծ բարեկամ: Նրա սպանության հարյուրամյակի առիթով Ֆրանսիայի Ազգային ժողովում ՀՅԴ-ի կազմակերպած միջոցառման մասին տես «Ոգեկոչում Ժան Ժորեսի մահուան հարիւրամեակի», Ազգային ժողով, Ֆրանսա, 3 նոյեմբեր, 2014 թ.: Տես նաև «ՀՅ Դաշնակցութեան Բիւրոյի խօսքը», Դոկտոր **Մկրտիչ Մկրտչեան**, Փարիզ, 3-ը նոյեմբերի 2014 թ., **Vincent Duclert**, Jean Jaurès et la défense des Arméniens. Le tournant d'un discours historique, «Վէմ», Եր., 2014, N 4, էջ 207-227:

40 Տես **Ժան Ժորես**, Արթնություն, «Դրոշակ», ժընևե, 1901, N 2, էջ 47:

կիրառվող ռուսականացման քաղաքականության վերաբերյալ: ՀՅԴ կուսակցական խողովակներով ստացվող այս ողջ տեղեկատվությունն ու քարոզչական նյութերը հիմնականում չէին ստորագրվում, կամ էլ դրանց վերջում դրվում էին մեկ-երկու տառից բաղկացած ծածկագիր անուններ:

«Pro Arménia»-ի խմբագրությանը, Հայկական հարցից բացի, սկսել էին հետաքրքրել նաև 20-րդ դարասկզբին կրկին աշխուժացած բուլղար-մակեդոնական շարժման առջև ծառայած լուրջ մարտահրավերները: Դրանք առաջին հերթին մեկնաբանում էր երկու ժողովուրդների բարեկամ, Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր Ֆրանսիս դը Պրեսանսեն: Մասնավորապես ուշագրավ էր նրա «Մակեդոնացիները և Եվրոպան» ծավալուն խմբագրականը⁴¹, որը, տպագրվելով Մակեդոնիայում ու Թրակիայում, 1903 թ. կեսերին բռնկված ու ողբերգական ավարտ ունեցած իլինդենյան ապստամբությանը⁴² հանգեցրած իրադարձությունների նախօրեին կարծես աշխարհին զգուշացնում էր մոտեցող արհավիրքի մասին:

Հայ ազատամարտի քաղաքական նպատակների և օտարների կողմից հնարավոր աջակցության ուղիների մասին խիստ ուշագրավ էին «Pro Arménia»-ի էջերում հրապարակված Երկրորդ ինտերնացիոնալի միջազգային սոցիալիստական բյուրոյի նախագահ **Էմիլ Վանդերվելդեի** բաց նամակը⁴³ և «Pro Arménia»-ի խմբագրության անդամ **Անատոլ Ֆրանսի**⁴⁴ «Pour l'union arménienne»⁴⁵ խմբագրականը: Դրանց միջոցով Երկրորդ ինտերնացիոնալի միջազգային սոցիալիստական բյուրոյի նախագահն ու ֆրանսիացի մեծ գրողը հանդես էին գալիս որպես այդ օրերին իր տասնամյակը նշող ՀՅԴ Ռաշնակցության՝ Հայկական հարցը միջազգային ասպարեզ տեղափոխելու քաղաքական ծրագրի ջերմ աջակիցներ:

41 Տե՛ս «Pro Arménia», 10 mai, 1901, N 12, էջ 89-91:

42 Ապստամբությունը սկսվել է 1903 թ. հուլիսի 20-ին (օգոստոսի 2-ին)՝ Սուրբ Իլյայի օրը (Ильин день):

43 **Էմիլ Վանդերվելդե** (1866-1938) – բելգիացի աջ սոցիալիստ, Բյուրսելի համալսարանի պրոֆեսոր: 1890-ականների կեսերից՝ Բելգիայի սոցիալիստական կուսակցության ղեկավար, ապա՝ Երկրորդ ինտերնացիոնալի միջազգային սոցիալիստական բյուրոյի նախագահ: 1919-1920 թթ. Փարիզի խաղաղության կոնֆերանսում ներկայացրել է Բելգիան: Որպես միջազգային սոցիալիստական շարժման գործիչ հակադրվել է բոլշևիկների բռնատիրական ձգտումներին:

44 **Անատոլ Ֆրանս (Ֆրանսուա Անատոլ Տիբո)** (1844-1924) – ֆրանսիացի մեծ գրող, գրականության 1921 թ. Նոբելյան մրցանակի դափնեկիր:

45 Տե՛ս «Pro Arménia», 25 mai, 1901, N 13, էջ 97:

ՀՅԴ եվրոպական քարոզչության սկզբնավորման տարեթվի համընկնումը կուսակցության գործունեության տասնամյակի հետ վկայում էր նրա տասնամյա պայքարի հորիզոնների ընդարձակման մասին: Թուրքական բռնապետության դեմ պայքարի դաշտի ընդլայնումը հին խնդիրների լուծման նոր հնարավորություններ էր ստեղծում հայ ժողովրդի լավագույն զավակների համար:

Գևորգ Ս. Խուդինյան – գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է հայոց նոր պատմության առանցքային հիմնահարցերը, այդ թվում՝ հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայաստանի Հանրապետության պատմությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային կուսակցությունների և առաջին հերթին ՀՅԴ պատմության ու գաղափարաբանության վերաբերյալ: Զբաղվում է նաև պատմագրության և պատմության տեսության ու մեթոդաբանության հիմնախնդիրների հետազոտությամբ:

Էլ. հասցե՝ khoudinyan@yahoo.com

Summary

AR FEDERATION (DASHNAKTSUTYUN) IN THE POLITICAL SYSTEM OF EASTERN EUROPEAN AND NEAR ASIAN COUNTRIES IN THE LATE 19TH - EARLY 20TH CENTURY

Part two: The ARF European Propaganda and the Birth of the “Pro Arménia”

Gevorg S. Khoudinyan
Doctor of Sciences in History

Key words – AR Federation, European propaganda, student circles, Ch. Mikaelian, Yu. Ghambaryan, the Socialist International, «Pro Arménia»:

The second general meeting of the ARF, which started on April 5, 1898 and lasted for about three months, decided to strengthen the propaganda carried out in favor of the Armenian issue abroad involving in it the best forces of the Armenian youth studying in European countries. The formation of the system of two Bureaus and the inclusion of capable forces like Christophor Mikaelian and Rostom (Stepan

Zoryan) in the newly founded Western Bureau for permanent work with the Western European political circles and the Balkan peoples also served that purpose.

In November of 1898, just a few months after the second general meeting of the ARF, Christophor Mikaelian left for Europe. Before his departure he had already implemented some preparatory work during his stay in the Caucasus aimed at gathering the capable forces for the European propaganda of the ARF and raising the necessary funds. Parallely, close relationships were established with publicist, poet and great philanthropist Pierre Quillard. The latter lived in Constantinople from 1893 to 1896 and later published articles in the French «Illustration», “L'Aurore”, and “Européen” papers criticizing the activities of Sultan Abdul Hamid.

The negotiations on the publication of the "Pro Armenia" were underway during the days of the 1900 World Exhibition opened in Paris. In the framework of the Exhibition on September 19, 1900, in the Russian section of the "International School", chaired by famous sociologist Maxim Kovalevsky and representatives of different nations were giving lectures, Christophor Mikaelian delivered a lecture in Russian on the topic "The Armenian Issue in Turkey".

On September 23, 1900, the 5th Congress of the Socialist International began its work in the "Salon of Wagram" in Paris. The representatives of the ARF, not yet officially registered with the Socialist International, entered the congress hall and participated in its activities with tickets issued by the "Droshak" editorial office as press representatives. The representatives of the ARF were able to include the discussions on the Armenian massacres and the Armenian issue in the work of the congress's "International Peace" session, which took place on September 26, at the second half of the day. On the last day of the Congress, on September 27, at its plenary session, the proposal on the resolution regarding the Armenians received from the conference on "International Peace" was read, welcomed with applause and validated.

On November 25, 1900, in Paris, under the editorship of Pierre Quillard and a rather respectable editorial board with participation of such well-known French intellectuals as Georges Clemenceau, Anatole France, Jean Jaures, Francis de Pressance, and Professor E. de-Roberti's, the first issue of the French magazine "Pro Arménia" was published that became the main mouthpiece of the process of transferring the Armenian issue to the international arena by the ARF. The information regularly published in the “Pro Armenia” about the murders and atrocities taking place in certain settlements of Western Armenia, were often reprinted in the newspapers of France and other European countries, played the role of a straitjacket for the Turkish authorities.

By expanding the field of confrontation with the Turkish dictatorship, the beginning of the European propaganda of the ARF created new opportunities for solving old problems for the best children of the Armenian people.

Резюме

АРФ ДАШНАКЦУТЮН В ПОЛИТИЧЕСКИХ СИСТЕМАХ ВОСТОЧНОЕВРОПЕЙСКИХ И ПЕРЕДНЕАЗИАТСКИХ СТРАН В КОНЦЕ XIX - НАЧАЛЕ XX ВВ.

Часть вторая. Пропаганда АРФ Дашнакцутюн в Европе и
зарождение «Pro Arménia»

Геворк С. Худинян
Доктор ист. наук

Ключевые слова - АРФ Дашнакцутюн, пропаганда в Европе, студенческие кружки, Х. Микаелян, Ю. Гамбарян, Социалистический интернационал, «Pro Arménia».

Начавшееся 5 апреля 1898 г. второе общее собрание АРФ Дашнакцутюн приняло постановление об усилении пропаганды армянского вопроса за границей путем привлечения лучших представителей армянской молодежи, обучающихся в европейских странах. Этой цели должно было послужить формирование системы двух Бюро и включение в новосозданное Западное Бюро таких деятельных лиц, как Христофор Микаелян и Ростом (Степан Зорьян).

В ноябре 1898 г., всего через несколько месяцев после второго общего собрания АРФ Дашнакцутюн, Х. Микаелян, отправился в Европу. До этого, во время своего пребывания на Кавказе, он провел сбор необходимых денежных средств и начал работу по вовлечению лучших представителей армянской интеллигенции в дело пропаганды Армянского вопроса в Европе. Параллельно с этим, были установлены тесные связи с французским публицистом, поэтом и филантропом Пьером Кийяром. Последний в 1893-1896 гг. проживал в Константинополе, а после этого опубликовал во французских газетах «Illustration», «Aurore», «Europeen» статьи, в которых критиковал деятельность султана Абдул Гаида.

В дни Всемирной выставки, открывшейся в Париже в 1900 г., продолжились переговоры об издании «Pro Arménia». В рамках мероприятия 19 сентября 1900 г. в русской секции «Интернациональной школы», которую возглавлял известный социолог Максим Ковалевский, Х. Микаелян прочитал лекцию на русском языке на тему «Армянский вопрос в Турции».

А 23 сентября 1900 г. в салоне «Ваграм» в Париже начал свою работу V Конгресс Социалистического Интернационала. Представители АРФ Дашнакцутюн, официально еще не вступили в Социалистический Интернационал, поэтому

вошли в зал Конгресса и участвовали в его работе как представители редакции «Дрошака». Им удалось включить в повестку заседания подкомиссии «Международный мир» обсуждение Армянского вопроса и информировать о последствиях резни армян 1890-х годов. Дискуссия состоялась 26 сентября во второй половине дня. В последний день Конгресса, 27 сентября, на пленарном заседании было зачитано и одобрено полученное от подкомиссии «Международный мир» предложение о составлении резолюции по Армянскому вопросу.

А 25 ноября 1900 г. в Париже под редакцией Пьера Кийяра и представительного редакционного совета, который украшали такие известные французские деятели и интеллектуалы, как Жорж Клемансо, Анатоль Франс, Жан Жорес, Франсис де Прессансе и профессор из Брюсселя Э. де-Роберти, вышел в свет первый номер франкоязычного журнала «Pro Arménia», который стал проповандистским рупором АРФ Дашнакцутюн в деле выведения Армянского вопроса на международную арену.

Регулярно публикуемая в «Pro Arménia» информация об угнетениях и убийствах армян в отдельных населенных пунктах Западной Армении, часто перепечатывалась во французских и других европейских газетах и в какой-то степени сыграла роль смирительной рубашки для турецких властей.

Пропаганда АРФ Дашнакцутюн в Европе расширила поле противостояния с турецкой деспотией и создала новые возможности для лучших армянских интеллектуалов в деле решения Армянскому вопросу.

REFERENCES

1. “Haykakan harts’ê P’arizi hamazhoghovnerum (Namakner Fransiayits’), “Drôshak”, Zhênew, 1900, hoktember, N 8 (**In Armenian**).
2. “HY Dashnakts’ut’ean Biwroyi khôsk’ê”, Doktor **Mkrtich’ Mkrtch’ean**, P’ariz, 3-ê noyemberi 2014 t’. (**In Armenian**).
3. “K’ristap’or Mik’ayêleani namaknerê”, Pëyrut’, Hamazgayini Vahê Sêt’ean tparan, 1993 (**In Armenian**).
4. “Niw’t’er H.Y. Dashnakts’ut’ean patmut’ean hamar”, khmb.’ **H. Tasnapeteani**, hat. B., Pëyrut’, 1985 (**In Armenian**).
5. “Sgapsak P’iêr K’iyea’-i yishatakin”, K. Pôlis, 1913 (**In Armenian**).
6. “Vogekoch’um Zhan Zhôrêsi mahuan hariwrameaki”, Azgayin Zhoghov, Fransa, 3 noyember, 2014 t’. (**In Armenian**).
7. **Abeghean M.**, Mer kusakts’akan keank’ê Germanioy mēj, “HY Dashnakts’ut’iwnê Yewropayi mēj (60-ameakin a’rt’iw)”, P’ariz, 1952 (**In Armenian**).
8. **Khudinyan G.**, HY Dashnakts’ut’ean k’nnakan patmut’yun, Yer., 2006 (**In Armenian**).
9. **Rostom**, Namakani, mahuan ut’sunameakin a’rt’iw, khmb.’ **H. Tasnapetean**, Pëyrut’, hrat. H. Y. Dashnakts’ut’ean, Hamazgayini Vahê Sêt’ean tp., 1999 (**In Armenian**).
10. **Simon Zawarean**. mahuan yeô’t’anasunameakin a’rt’iw, hat. B., Pëyrut’, Hamazgayini Vahê Sêt’ean tparan, 1989 (**In Armenian**).
11. **Zhan Zhôrês**, Art’nut’iwn, “Drôshak”, Zhênew, 1901, N 2 (**In Armenian**).